ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«27» դեկտեմբերի2019թ. № 483

«ՍՊԻՏԱԿԻ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ թռչնաբուծական ինկուբատոր կառուցելու մասին դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14082019-06-0059 և թիվ 14082019-06-0056 վկայականները՝ ***որոշում եմ.***

1. «Սպիտակի թռչնաբուծական կոմբինատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝

1) 06-006-0202-0024 կադաստրային ծածկագրով 1,26494 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր հողատեսքի հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության և տրամադրել «ք. Սպիտակ, Շիրակի խճուղի, թիվ 129» հասցեն,

2) 06-006-0202-0012 կադաստրային ծածկագրով 0,17017 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության և տրամադրել «ք. Սպիտակ, Շիրակի խճուղի, թիվ 129/1» հասցեն:

2. Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները և տրամադրված հասցեները ենթակա են պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնին (պետի ժ/պ Արման Ավետիսյան)՝

3) սահմանված կարգով փոփոխություն կատարել հողային հաշվեկշռում,

4) տրամադրել շինարարության թույլտվություն:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Սպիտակ համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Սահակյանի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2019թ. դեկտեմբերի 27
ք.Սպիտակ